

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԽԵԼՔՆ ՈՒ ՍԻՐՏԸ

ՍԱՄՈՒԷԼ ԲԱԼԱՂԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ ¹⁾)

III

Մկները, կուղբերը, նրանց ջրանցքները ու ամբարտաւիշները, Շները, նրանց խանդառութիւնը, սէրը, Շները մեծ խելք ունին: Կապիկները սատարիկ սրտով են վերաբերում զէպի իրանց անբազդ ընկերները: Կապիկները չեն սիրում, որ նրանց վերայ ծիծաղեն: Կապիկների ճաշակը, Կապիկները ընդունակ են նու՛ն իսկ հերոսական գործեր կատարելու: Կապիկների հետաքրքրութիւնը, Կապիկների գործերում արտապաշտում է առհասարակ մեծ խելք:

Խելքը պարզ արտայայտում է նաև կրծողների (ГРЫЗУНЫ) դասակարգին պատկանող կենդանիների գործերում: Իսկ դոցանից ամենախելօքներն են մեծ մկները (БЕЛКА) և մանաւանդ կուղբերը (СОБРЫ): Ահա ինչ են պատմում մի քանի նատուրալիստներ մեծ մկների կեանքից: Այդ կենդանիները շատ անգամ ձևաներ գողանալով տանում են նրանց վերին յարկից շինութեան ներքին յարկերը, իսկ որպէս զի ձևաները չը կտրտուեն, իրանք շարունակ են կարգով սանդուխքի զանազան աստիճանների վերայ: Նոցանից մէկը գողանալով վերևի յարկում մի ձու՝ բերում է տալիս սանդուխքի ամենաբարձր աստիճանի վերայ կանգնած մկանը, որը նոյն բոպէին յանձնում է

¹⁾ Զ. Ռոմէնո—կենդանիների խելքը, էջ 370:

ձուն իրանից մի փոքր քաշ կանգնած ընկերոջը, իսկ ինքը ցածրանալով կանգնում է իր ընկերոջից մի աստիճանով ներքև սանդուխքի վերայ, ստանում է նրանից ձուն, յանձնում իրանից ցածր կանգնածին և այդպէս շարունակում է, մինչև որ ձուն տնփորձ կը հասցնեն ներքևի յարկը:

Այս ֆախտի ճշմարտութիւնը վկայում են շատ գիտնականներ: Ձնասէն պատմում է, որ մի անգամ անգլիացի մի նաւապետ զայրացել էր իմանալով, որ շոգենաւից ամեն օր անհետանում են ձաւները: Հաւատացած լինելով, որ այդ բանը անում են ծառալողները, նա հրամայեց նորից զամբիւղը լցնել ձաւներով ու չնայելով մի անկիւնում թաղ կենալով՝ սպասում էր գողի գալու: Ի՞նչքան մեծ եղաւ նրա զարմացքը, երբ նա տեսաւ, որ ծառալողների տեղ մօտեցան զամբիւղին մեծ մկները ամի անընդհատ շարք կազմեցին սկսած իրանց բռնից մինչև ձաւների զամբիւղը և սկսեցին առաջի թաթիկներով մէկը միւսին տալ ձաւները¹⁾:

Յաճախ մեծ մկները այս կամ այն նիւթը զողանալու համար դիմում են աւելի ևս սրամիտ միջոցների:

Սակաւն թողնենք Ձնասէնը պատմի, թէ ինչպէս են նրանք չափը տակում իւղը ճեղ բերանք ունեցող շիշերից: Ուղղակի կոխել իրանց դունչը շիշի մէջ ու ալդպէս ուտել իւղը՝ անկարելի է նրանց համար շիշի բերանքը ճեղ լինելու պատճառով: Ապա ինչպէս են անում նրանք «Մի սարդափում, ասում է Ձնասէն, դրել էին ֆլորենտինեան իւղով լիք շիշեր մի արկղի մէջ, որը ծածկովթ չուներ: Գալով մի անգամ սարդափը իւղ վեր առնելու նպատակով՝ շիշերի տէրը նկատեց, որ շիշերի մէջ իւղի քանակութիւնը սաստիկ պակասել է: Այդ բանը նրան կասկածաւոր թւաց, նա նորից լցրեց շիշերը և կողպեց ինչպէս առաջ, Միւս առաւօտը չափուեց, որ իւղի մի մասը էլի անհետացել է: Վերջապէս երբ սկսեցին դիտել սարդափը փոքրիկ պատուհանով, ալն ժամանակ նկատեցին, թէ ինչպէս մկները մտնելով արկղի մէջ, բարձրացան դէպի շիշերի բերանքը ու քարշ գցեցին շիշի բերանքի մէջ իրանց պոչերը¹⁾: Յետոյ նրանք հանում էին շիշերից իրանց պոչերը և սկսում լիզել պոչերին կպած իւղը...»

Այս պատմութիւնը ալնքան անհաւատալի թւաց Բոմենսին, որ նա ձեռնարկեց մի շարք փորձերի նրա ճշտութիւնը ստուգելու համար: Նրա փորձերն էլ միևնույն բանը ցոյց տվին. ալստեղ նույնպէս մկները օգտւում էին իրանց պոչերից՝ շիշերից իւղը զողանալու համար:

Մանօթանանք այժմ կուղբերի (ծծո՞րն, որի հիանալի մօրթից մուշտակների օձիք են շինում) կեանքի հետ: Այդ կենդանիները,

¹⁾ Ձ. Բոմէնս—նույն տեղը:

որոնք մի փոքր աւելի մեծ են քան նապաստակները, ասլրում են զետերի կամ լճերի ափերում Ասիայում-Ամերիկայում: Ջրերի մօտ նրանք կառուցանում են առանձին շինութիւններ երկու յարկից բաղկացած գործ ածելով շինութեան համար ծառերի ծիւղեր: Բէշկերի տունը ունենում է հաղորդակցութիւն թէ ցամաքի հետ և թէ գետի կամ լճի յատակի հետ: Այդ մուտքերը շինած են լինում ճարպկութեամբ այնպէս, որ դրսեւից նրանց տեսնել անկարելի լինի:

Կուղբերը կերակրւում են ծառերի բարակ և հիւթալի ծիւղերով, որոնց բերում են ցամաքից ու ջրի մէջ գտնուող անցքերով մտնում իրանց տունը: Հետաքրքիր է ծիւղեր ճարելու միջոցը: Եթէ կուղբերի տան մօտ կան ծառեր, այն ժամանակ նրանք դուրս գալով ջրից իրանց ատամներով սղոցում են ծառի բունը (СВОЛЪ), մինչև որ ծառը կը տապալւի գետնին: Դրանից յետոյ նրանք կտորում են ատամներով վեր ընկած ծառի փոքրիկ ծիւղերը ու տանում յուն ուտելու համար:

Յաճախ գործը հեշտացնելու համար նրանք սղոցում են ծառը ոչ թէ ջրի կողմից, այլ հակառակ կողմից, այնպէս որ ծառը վեր ընկնելով դէպի ջուրը՝ նրա ծիւղերը խորասուզւում են ջրի մէջ: Այդպիսով էլ կարիք չի լինում աւելորդ աշխատանքի, որովհետև եթէ ծառը վեր ընկնէր դէպի ցամաքը, կուղբերը ստիպւած կը լինէին ծիւղերը քաշ տալ ցամաքով մինչև ջուրը:

Բանը բոլորովին փոխւում է, երբ ջրի մօտերքում էլ չեն լինում ծառեր. այդ դէպքում կուղբերը ստիպւած են լինում ծիւղեր բերել հեռւից: Բայց ինչպէս բերեն ծիւղերը ցամաքով, երբ ծառերը յաճախ գտնւում են 70 կամ էլ աւելի սաժէն հեռու նրանց բունից:

Այդ փոքրիկ կենդանիների համար շատ զժւար է ծանր ծիւղերը այդքան երկար ճանապարհ բերել մինչև բունը հասցնել: Ապա ինչպէս են անում նրանք:

Ահա այստեղ կուղբերը ցոյց են տալի իրանց զարմանալի սրամտութիւնը, հեռաւոր տեղից ծիւղեր բերելու համար նրանք դիմում են միևնոյն միջոցին, որին յաճախ դիմում է և մարդը. նրանք շինում են ջրանցք (КАНАЛЪ):

Օրինակ ենթադրենք որ մի որ և է գետի ափում ապրում են կուղբերը, իսկ ծառերը գտնւում են նրանց բունից և ջրից 70 սաժէն հեռու: Այդ դէպքում կուղբերը սկսում են փորել գետինը սկսած ջրից և այդպէս փորելով շարունակ գնում են մինչև ծառերը, գոյանում է մի խողովակ, որի միջով ջուրը գետից հեշտութեամբ հոսում է դէպի ծառերը:

Հէնց այդ էլ հարկաւոր է կուղբերին: Հասցնելով ջուրը մինչև ծառերը, նրանք սկսում են սղոցել ծառերը իրանց ատամներով, իսկ տապալելուց յետոյ կոտորում են ծառերի փոքրիկ ճիւղերը, զցում են նրանց իրանց ջրանցքի մէջ և հեշտութեամբ քաշ տալի ջրի միջով մինչև իրանց բունը:

Կուղբերի կեանքի յարմարութեան համար անհրաժեշտ է, որ ջրի մակերևոյթը շատ չը ցածրանայ նրանց բունից, այլ եթէ կարելի է միշտ մնայ միևնոյն բարձրութեան վերայ: Բայց մենք գիտենք, որ գետերում կամ լիճերում ջրի մակերևոյթը միշտ փոփոխւում է, այդ պատճառով կարող էր պատահել որ կուղբերի բների մօտ ջուրն ցամաքէր, եթէ նրանք չ'աշխատէին դրա առաջը առնել: Որպէս զի ջրի մակերևոյթը միշտ անսովորապէս պահպանւի բների շուրջը, կուղբերը շինում են արւեստական լճեր իրանց բների շուրջը կառուցանելով ջրի մէջ ամբարտակներ (плотина):

Այդ շինածքը, որը ունենում է մօտ 1 արշին բարձրութիւն և յաճախ ահագին երկարութիւն, իսկապէս մի հսկայական դործ է, եթէ աչքի առաջ ունենանք նրան կառուցանող փոքրիկ կենդանիներին:

Թէ ամբարտակները և թէ ջրանցքները հիմնալի կերպով դիմանում են զանազան աննպաստ արտաքին ոյժերին, օրինակ ջրի ջնջմանը, որը շուտ շուտ փոխւում է:

Այդ շինածքների ամրութիւնը բացատրում են նրանց հետադադողները այն հանգամանքով, որ նրանք կառուցւած են լինում ճիշտ ֆիզիկական և մեխանիկական օրէնքների հիման վերայ: Ի՞նչ է նշանակում այդ փաստը, մի՞թէ այդ փոքրիկ կենդանիները իրօք այնքան մեծ խելք ունեն, որ ընդունակ են ըմբռնել մեխանիկայի և ֆիզիկայի հիմնական օրէնքները և դրանց հիման վերայ մինչև անգամ շինութիւնն եր կառուցանել?

Այս հարցը շատ գիտնականներին է հետաքրքրել և հետաքրքրում է մինչև այժմ, բայց տարաբաղդաբար բաւարար պատասխան չը կայ դեռ նրա համար:

Ամեն հետազօտող պնդում է, որ ամբարտակը և ջրանցքը շինում են զարմանալի ճարտարապետական հմտութեամբ, այդ մի անհերքելի փաստ է: Բայց և ամեն մի հետազօտող ընկնում է անել դրութեան մէջ, երբ ցանկանում է որոշ բացատրութիւն տալ այդ տարօրինակ փաստին:

Ամենքը անկարելի են գտնում ընդունել այն միտքը թէ կողբերին ծանօթ են գիտութեան գլխաւոր օրէնքները, բայց միակողմից ամենքը չեն կարող չը խոստովանել, որ առանց նոյն օրէնքների իմանալու անհնարին է կառուցանել այդ տեսակ շինւածքներ:

Շատերը ցանկանալով մի կերպ դուրս գալ այդ դժւար դրութիւնից ասում են, թէ կողբերը իրանց շինւածքները կառուցանում են բնազդման օգնութեամբ և ոչ թէ խելքով: Բայց այդ բացատրութիւնը շատ քչերին է բաւականացնում: Առհասարակ ամեն անգամ երբ անհնարին է լինում բացատրել այս կամ այն կենդանու հոգեկան երեւոյթները, էն բոպէին առաջ է գալիս բնազդում խօսքը:

Ես մինչև հիմայ չէի խօսում բնազդման մասին, որովհետև թէև այդ խօսքը յաճախ գործ է ածւում թէ գիտութեան և թէ հասարակութեան մէջ, բայց չը նայած դրան դեռ շատ քիչ բան է յայտնի բնազդման մասին:

Ուրեմն պէտք է ընդունենք վերջ 'ի վերջոյ, որ կողբերի ամբարտակների և ջրանցքների կառուցանելու փաստը մնում է դեռ չը բացատրւած: Բայց և այնպէս այդ կենդանիների կեանքի ուսումնասիրողների ընդհանուր կարծիքով, նրանք (կողբերը) օժտւած են մեծ խելքով:

Սակաւ կարելի է գտնել այնպիսի կենդանիներ, որոնք ունենային այն աստիճան բուն մարդկային զգացմունքներ, ինչպէս է շուներ: Հպարտութիւն, բարկութիւն, խանդոտութիւն, գոռոզութիւն, ատելութիւն, սէր — այս բոլորը համարեա նոյնքան յատուկ են շան բնաւորութեանը ինչքան և մարդկանց:

Որ շունը ընդունակ է զարմանալի սիրոյ դէպի իր տէրը — այդ

գլխուն ամենքը, Յաճախ երբ շունը նկատում է, որ իւր տէրը սկսել է նրա հետ վարել սառը կերպով, նա ընկնում է անասելի յուսահատութեան մէջ:

Նոյն սիրոյ զգացմունքից է առաջանում շատ անգամ շներին խանդոտութիւնը: Առաւել շունը տանել է կարող երբ նրա աչքի առաջ իրան տէրը սկսում է զգուշանալ մի ուրիշ շան: Ահա մի օրինակ.

Մի ընտանիքում ապրում էր մի շուն Չարլի անունով. նա, աչքաքան պառաւել էր, որ Նրա համար շատ դժւար էր մինչև անգամ մանգալը և էնց ալդ պատճառով էլ նա շատ քիչ էր իր տեղից շարժում: Բայց ահա միևնույն ընտանիքը բերում է իր տուն պահելու մի փոքրիկ շուն, որը շուտով դրաւում է բոլորի սէրը: Ակսած ալդ օրից խեղճ Չարլին կորցրեց իր հանգստութիւնը: Կարծես բաղդաւոր ախոյեանի աջողութիւնը ալրիւսիս լինէր նրան: Չը նալած իր անտանելի դրութեանը, Չարլին ալփմ աշխատում էր վաղղղել, թռչկոտալ, մի խօսքով անում էր ամեն բան, որ ալէսղի նմանի իր ախոյեանին և ստանալ գգւանք տան տիրոջից, նրա կատաղութեանը չափ չէր լինում երբ տէրը նրան թողած փոքրիկ շանն էր գգւում ¹⁾:

Սակայն ոչ պակաս հետաքրքիր է և շան խելքը: Խօսելով այդ բանի մասին Դարվինը աւելացնում է. «պ. Կոյլկոունը մի անգամ վիրաւորեց մի զոյգ վայրենի բաղեր, որոնք վեր ընկան գետի միւս ափում: Նրա շունը աշխատում էր միանգամից երկուսին էլ բերել, բայց այդ նրան չէր յաջողւում: Այդ ժամանակ նա զիտակցութեամբ խեղդեց բաղերից մէկին, [Ժէկ ամբողջ իր կեանքում նա որսերի ոչ մի փետուր չէր ճխլած, վիրաւորւածին բերաւ տւաւ իր տիրոջը, չետոյ չետ գնաց, որ խեղդած բաղին էլ բերի»³⁾։

Այս ֆակտը վերին աստիճանի նշանաւոր է, որովհետեւ նա
նա պարզ ցոյց է տալիս, որ կենդանիների գոնեա մի քանի տեսակ-
ները ընդունակ են դատողութիւններ անել: Այս դէպքում եթէ
որսկանը ուղղակի սպանած լինէր երկու բաղերին, շան համար
դժւար չէր լինել նրանց երկուսին էլ միասին բերել: Հետաքրքիրը
հէնց այն էր, որ բաղերը միայն թեթեւ կերպով վիրաւորւած էին,
այդ պատճառով միանգամից նրանց բերել անհնարին էր: Ի՞նչ պէտք
է անէր կենդանին: Եթէ նա մէկին թողնէր գետի միւս ափի վերայ,

¹⁾ Ջոյ՝ Ռոմանյան—Նույնտեղ, էր. 450.

²⁾ Դարսին—մարդու ծագումը, եր. 47.

խսկ միւս բաղին բերէր տար տիրոջը այն նպատակով որ նորից վերադառնայ երկրորդին էլ բերելու համար, այն ժամանակ հասկանալի բան է, որ որսկանը կը զրկւէր երկրորդ բաղից, որովհետեւ այս վերջինը դեռ կենդանի էր՝ և հէնց որ շունը նրան բաց թողնէր, նա իսկոյն կը փախչէր մի կերպ: Ահա այս դատողութիւնները ինչպէս երեւի կատարւեցան շան գլխում, որոնց հետեւանքն այն եղաւ, որ նա մի բաղին ափի վերայ թողնելուց առաջ, նրան խեղդեց և յետոյ կենդանի բաղին տարաւ իր տիրոջը տալու:

Կարծեմ, որ ընթերցողը կը համաձայնէի, որ շան բնորած միջոցը ամենալաւ ելքն էր, որին կարելի էր դիմել: Եւ եթէ այդ կենդանու տեղը մարդ լինէր, որին մի որ և է պատճառով նոյնպէս անհնարին լինէր երկու վիրաւորւած բաղերին միանգամից անցկացնել գետով, նա անկասկած կ'ընտրէր նոյն միջոցը, որին դիմել էր որսկանի խելացի շունը...

Նոյնպէս հետաքրքիր է Ղարւինի գրքում բերւած մի ուրիշ պատմութիւն:

Դուկտոր Հիլը իր սահնակում լծում էր շներ և նրանց օգնութեամբ միշտ զբօսնում էր սառուցի վերայ: Զարմանալի է, որ այդ շները, երբ սառուցը հաստ էր լինում, վազում էին մէկը միւսին մօտիկ, իսկ այնտեղ, ուր սառուցը բարակում էր և կարող էր ամեն մի բոպէ կոտորել, նրանք հեռանում էին իրարից և այնպէս էին քաշում սահնակը:

Անների իրարից հեռանալը, ասում է Ղարւինը, յաճախ ծառայում էր ճանապարհորդների համար իբրեւ առաջին նախազգուշութիւն և ապացոյց, որ սառուցը դառնում է բարակ ու վտանգաւոր: ¹⁾

Հարկ եմ համարում այստեղ մատնանիշ անել շների մի զարմանալի ընդունակութեան վերայ:

Նրանք ոչ միայն ճանաչում են իրանց տէրերին շատ տարիներ բացակայութիւնից յետոյ, որը ցոյց է տալիս որ շները ունեն մեծ յիշողութիւն, այլ և ընդունակ են մտաբերել իրանց ծանօթներին, եթէ ցոյց տան նրանց վերջինների լուսանկարները: Շները՝ ինչպէս երեւում է, ընդունում են ծանօթների պատկերները և լուսանկարները կենդանի մարդկանց տեղ:

¹⁾ Ղարւին, Նոյն տեղը եր. 46.

Ահա ինչ է պատմում Ջ. Ռոմենսը այդ բանի մասին:

Անգլիայից մի մարդ դործով գնացել էր Հնդկաստան, թողնելով իր ընտանիքը և շուներ Անգլիայում: Նրա նուանալուց երկու տարի ուշ, նրա ընտանիքը ստանում է նրա մեծ գիրքով նկարած պատկերը շրջանակի մէջ, «էջնց որ շուներ մտաւ արն սենեակը, որի մէջ դրած էր պատկերը, նա ճանաչեց իր տիրոջը, թէ և չէր տեսել նրան երկու տարւալ ընթացքում. մոտեցաւ պատկերին և ակնց լիզել տիրոջ երեսը»¹⁾:

Եթէ չեմ սխալուած՝ այն երեւոյթը, որ շները ընդունում են պատկերը կենդանի մարդու տեղ, գոյութիւն ունի շատ վայրենի մարդկանց շրջանում:

Սակայն ամենահետաքրքիր կենդանին զգացմունքների և խելքի զարգացման տեսակէտից անկասկած կապիկն է: Առաջ ծանօթանալով նրանց զգացմունքների հետ: Մայրական սէրը այնքան զարգացած է, որ կապիկները յաճախ չեն կարողանում տանել իրանց երեխաների մահը: Իսկ եթէ մեռնում է մայր-կապիկը, նրա որբերը չեն մնում անխնամ. նրանց իսկոյն վերցնում են ուրիշ կապիկներ և գեղեցիկ կերպով հոգում նրանց համար:

Երբ կապիկները իրանք չեն ունենում երեխաներ, նրանք շատ անգամ դողանում են ուրիշ կապիկների երեխաներին և նրանց խնամում այնպէս, որ կարծես իրանց սեպհական երեխաները լինեն: Մի քանիսները մինչև անգամ դողանում են շան և կատուի ձագերին:

Դարւինը պատմում է մի կապիկի մասին, որը նույնպէս գողացել էր կատուի ձագ և ամբողջ օրեր նրանով էր զբաղւում: Մի օր որդեգիր-կատուն արնքան աներախտազէտ դառնաց, որ ճանդերով ճանդրանց իր բարերար կապիկին: Վերջինս շատ զարմացաւ, ոկսեց գիտել կատուի թաթերը և դառնելով նրանց վրալ սուր ճանդեր, իսկոյն առանց երկար մտածելու ատամներով կրծոտեց և դէն զցեց կատուի ճանդերը:

Զարմանալի սրտով են վերաբերւում կապիկները դէպի իրանց հիւանդ կամ վիրաւորւած ընկերները: Երբ մէկը նրանցից հիւանդանում է, նրան շրջապատում են միւսները, գրկում են, համբուրում են, զանազան համակրական ցոյցեր են անում հիւանդի ցաւը թեթեւացնելու համար:

Պատմելով մի ակդ տեսակ դէպքի մասին Ռոմենսը ասում է. «ակսած արն լոպէից, երբ մէկը հիւանդացաւ, ընդհանուր ուշադրութիւնը և հոգա-

¹⁾ Ռոմենս, նույն տեղ եր. 462.

տարութիւնը դէպի նրան ընկերներէ կողմից կրկնապատկեց, հետաքրքիր և միևնույն ժամանակ սաստիկ սրտաշարժ էր տեսնել, թէ ինչպիսի քընք-շութեամբ հոգում էին նրանք փոքրիկ էակի հիւանդի համար: Յաճախ նրանք մրցում էին իրար հետ ամեն մէկը ցանկանալով, որ առաջ ինքը քնքուլ ծառաութիւններ անի հիւանդին: Նրանք շատ անգամ գողանում բերում էին քաղցր ուտելիքներ հիւանդի համար: Նրանք քնքաբար վերցնում էին հիւանդին իրանց ձեռքերի վերայ, սեղմում էին իրանց կրծքին և լաց էին լինում նրա համար անպէս՝ «ինչպէս սիրող մալըր լաց է լինում իր հիւանդ երեխայի համար»¹⁾:

Կապիկները սաստիկ բարկանում են, երբ նրանց վերայ մէկը ծիծաղում է: Բազմաթիւ օրինակներից բերեմ մէկը:

Մի կապիկ մուրճը ձեռին աշխատում էր կակալ կոտրել, երբ նրան մօտեցաւ մի կին և սկսեց հետաքրքրութեամբ նայել նրա վերայ, Աւր. ջապէս կապիկը կոտրեց կակալը, որ տարաբաղաբար փչացած դուրս եկաւ: Նրա առաջ կանգնած կինը տեսնելով նրա անաշուղտութիւնը սկսեց ծիծաղել: Այդ որ տեսաւ կապիկը կատաղեց ու սկսեց շարտել կնոջ վերայ ինչ որ կար նրա շուրջը. կակալներ, մուրճը, սրճամանը և շորերը: Դար-վինը նոյնպէս նկատել է կապիկների բնատրութեան ալդ գիծը. նա պատ-մում է, որ երբ կենդանաբանական ալգիի պահապանը մօտենալով նոյն ալգիում գտնուող մի կապիկի վանդակին հանում էր գրպանից մի նամակ կամ գիրք ու սկսում բարձր կարդալ, կապիկը անքան բարկանում էր, որ կատաղութիւնից սկսում էր կրծոտել իր թաթը: Հասկանալի է, որ ասի դէպքում կապիկը պահապանի գիրք կարդալը համարում էր մի տե-սակ ծաղր իրա վերայ:

Կապիկների որձերը թռչունների որձերի նման շատ անգամ ունենում են աւելի աչքի ընկնող գոյներով ներկած մարմին: Ուրիշ խօսքերով կապիկների որձերի մարմինը աւելի շատ է նախշուծ, աւելի գեղեցիկ է (կապիկների տեսակէտից) քան թէ էգերին: Ընթերցողին արդէն յայտնի է, որ թռչունների վերաբերմամբ այդ փաստը բացատրւում է նրանով, որ թռչունների էգերը ունենալով գաղա-փար գեղեցիկ մասին, ընտրում են միշտ աւելի գեղեցիկ որձերին իբրեւ ամուսիններ: Որովհետեւ այդ տեսակ ընտրութիւն կատարւել է դարերի ընթացքում, դրանցից այն հետևանքն է դուրս եկել, որ մինչդեռ էգերը երկար ժամանակի ընթացքում մնացել են անփոփոխ, որձերը ընդհակառակը դառել են աւելի գեղեցիկ:

¹⁾ Ռոմենս, Նոյն տեղը եր. 481.

Մենք նոյնպէս վերեւ տեսանք, որ նոյն իսկ որձերի գեղեցիկ լինելու ֆակտը ապացոյց է, որ թռչունները ունեն յայտնի էսթէտիկական զարգացում:

Նոյն բացատրութիւնը տրուում է նաեւ կապիկների վերաբերմամբ: Այդ պատճառով ընդունուում է, որ կապիկները նոյնպէս ունեն ճաշակ դէպի գեղեցիկը, թէեւ այդ ճաշակը այնքան չէ զարգացած՝ ինչպէս թռչունների շրջանում:

Եւ արդէն ասացի, որ կապիկները ունեն բաւականին զգայուն սիրտ: Պէտք է աւելացնեմ, որ սէրը դէպի իրա անբաղդ ընկերը երբեմն կապիկին հասցնում է մինչեւ հերոսութիւն: Ահա լսեցէք, թէ ինչ է պատմում յայտնի Բրեմը:

Մի անգամ ճանապարհորդելով Արիսինիալում Բրեմը իւր ընկերների հետ պատահեցին մի խումբ կապիկների, որոնք բոլորն էլ արդէն բարձրացել էին մօտակալ լեռան գագաթը, բացի մի փոքրիկ կապիկից, որը դեռ նոր էր աշխատում բարձրանալ ձորից: Ահա հէնց այդ խղճովի վերալ թափեցան ճանապարհորդների շները: Կապիկի դրութիւնը սարսափելի էր, նա չատկեց մի բարձր քարի վերալ, բայց շները իսկոյն շրջապատեցին նրան: Նա սկսեց ողբաղին ձայնով դռաւ... «Այդ ժամանակ որձերից ամենամեծը մի իսկական հերոս, նորից ցածրացաւ սարից, կամաց կամաց մօտեցաւ փոքրիկ կապիկին, սկսեց նրան զգուշ և լեռնոյ հանդիսաւոր կերպով տարաւ նրան իր հետը:

Ակներեւ է, որ այս դէպքում ազատիչ կապիկը պատրաստուել էր զոհնելու իր կեանքը, որովհետեւ ներքեւում այնքան շներ կային, որ նրան երբէք կենդանի բաց չէին թողնիլ: Սակայն բաղդի բերմամբ նա և փոքրիկ կապիկը ազատեցան ահա ինչպէս. ազատիչ կապիկի վարքը այնքան զարմացրել էր շներին, որ նրանք ապշած նայում էին, երբ մեծ ու փոքրիկ կապիկները հեռանում էին նրանցից: Ուրեմն կապիկների փրկութիւնը բոլորովին պատահական չէր:

Անկասկած կապիկները ունին նաեւ մեծ խելք. եթէ մի որ և է ցածր կենդանի աշխատում է կոտորել օրինակ կակալ, նա ըստ մեծի մասին օգտուում է իր ատամներով: Իսկ եթէ վերջինները մի որ և պատճառով չեն օգնում, կենդանին սատոիկ տանջում է, չը կարողանալով նպատակին հասնել: Եթէ այդ բոլորում տաք նրան մի մուրճ, նա անկարող կը լինի օգտուել նրանով. ցածր կենդանիները

ընդունակ չեն գործ ածել գործիքներ իրանց նպատակին հասնելու համար:

Բայց եթէ նոյն փորձը անէք կապիկի հետ, բոլորովին հակառակ հետեանք կը ստանաք: Օրինակ եթէ կապիկին տաք մի մուրճ կամ քար այն ժամանակ, երբ նա տանջուում է աշխատելով կոտրել կակալը, նա առաջ հետաքրքրութեամբ կը զննի նրան, յետոյ կը փորձի օգտուել նրանով: Սկզբում փորձը անաջող կը լինի. կապիկը կը խփի կակալին մուրճի ոչ այն մասով, որով հարկ է խփել, բայց վերջ ի վերջոյ երկար տանջելուց յետոյ նա կընտելանայ մուրճի կանոնաւոր գործ ածելուն:

Մի որ և է նոր, չը տեսնած երեւոյթ սաստիկ հետաքրքրում է կապիկին և նրա մէջ արտադրում է ցանկութիւն անսպառնալու գտնել նրա պատճառը: Եթէ տաք կապիկին մի առարկայ, որը նա երբեք չի տեսել, նա իսկոյն կը սկսի զննել, դիտել, մասերի բաժանել նրան որպէս զի իմանայ նրա կազմութիւնը:

Պրոֆեսոր Ռոբերտսոնը պատմում է հետեւալ դէպքը:

Պարիզի Jardin des plantes-ում մի կապիկի վանդակի առաջ կանգնած ամբողջ զցում էր նրան պտուղներ, որոնց նա ազատութեամբ ուտում էր: Աւերջապէս մէկը վանդակի մէջ զցեց փոքրիկ ձեռի հալելի, որը ունէր ամուր փալտեալ շրջանակ. կապիկը իսկոյն վեր առաւ հալելին և սկսեց նրան պտտեցնել... Յանկարծ նա կանգնեց. նրան զարմացրեց իրա պատկերը հալելու մէջ, մի րոպէ նա տարակուսանքի մէջ էր, լետու արագութեամբ աչքերը ուղղեց դէպի հալելու քամակը, ցանկանալով ախտեղ գտնել պատկերի արտադրողին: Ոչինչ չը գտնելով նա զարմացաւ և ինչպէս երևում է, վերագրեց աղբ հանգամանքը իրա անարագաշարժութեան. նա նորից բարձրացրեց հալելին, զգուշութեամբ մօտեցրեց իրան և արագ շարժելով գլուխը՝ նայեց հալելու քամակին: Այս անգամ էլ ոչինչ չը գտնելով, նա էլի կրկնեց իր փորձը: Այժմ նրա զարմացքը փոխւեց բարկութեան. նա սկսեց՝ ինչքան ուժ ունէր, խփել վանդակի լատակին հալելիով, մինչև որ վերջինս փշրեց...:

Ռենգեր պատմում է, որ երբ առաջի անգամ նա տեսց իր կապիկներին ձու ուտելու համար, վերջինները փշրեցին ձուն, աջապէս որ հեղուկի մեծ մասը թափւեց և կապիկներին շատ քիչ հեղուկ մնաց ուտելու համար: Բայց լետու կապիկները գտան ձու ուտելու հնարը. նրանք՝ երբ ձուն ստանում էին, զգուշութեամբ կոտրում էին ձըւի մի ծալը, ապա կճեպի կտորները հանում իրանց մատներով ու լետու ուտում աջապէս, որ ոչինչ չէր կորչում:

Ռենգերը մի անգամ տեց իր կապիկներին շաքարի մի կտոր փաթած թղթի մէջ։ Շաքարի հետ նա դրել էր թղթի մէջ ևս մի պիծակ (очаг), կապիկը շտապով բաց արեց շաքարը, որ ուտի, քանկարծ պիծակը կծեց նրան։ Դրանից լետով Ռենգերը էլ չը կարողացաւ խաբել կապիկներին։ Երբ նա փաթաթեալով թղթի մէջ շաքարի հետ մի պիծակ, տալիս էր կապիկներին, սոքա առաջ զգուշութեամբ մօտեցնում էին փաթած առարկան իրանց ականջներին, որպէսզի իմանան թէ արդեօք թղթի մէջ չը կա պիծակ ¹⁾։

Մի ընտանիքում ապրում էր մի կապիկ։ Որպէս զի նա ազատ չը թափառի սենեակներում, նրան շղթաւով կապել էին սենեակում դրած ծանր լացարանից (УМЫВАЛЬНИКЪ), Ամեն անգամ երբ կապիկը ուզում էր վեր առնել մի առարկա, որը նրանից հեռու էր դրած և շղթալի երկարութիւնը թուլ չէր տալիս նրան վերցնել առարկան, կապիկը հետեւալ միջոցին էր դիմում։ Մօտենալով լացարանին, նա գործ էր դնում իր բուրդով, որպէս զի շարժի տեղից լացարանը և մօտեցնի վերջինը իրան հետաքրքրող առարկային։ Նա աչնքան խթում էր, որ լացարանը մօտենում էր ցանկալի առարկային, աչն ժամանակ նա ազատ մօտենում էր և վերցնում առարկան։

Նոյն կապիկը սաստիկ ատում էր ալդ ընտանիքում ծառաւոդ աղախնին և երբ սա մտնում էր նրա սենեակը՝ կապիկը շարտում էր ամեն բան ինչ որ ձեռքն էր ընկնում, ցանկանալով ալդ առարկաներով խփել աղախնին, բայց որովհետեւ կապիկը փոքրիկ էր իսկ աղախինը բարձրահասակ, ալդ պատճառով կապիկի շարտած առարկաները դիպչում էին աղախնի ոտներին ոչինչ վնաս չը հասցնելով նրան։ Ալդ հանգամանքը միայն աղախնի ծիծաղն էր շարժում։ Տեսնելով նրան ծիծաղելիս՝ կապիկը աւելի ևս կատաղում էր։

Վերջապէս նա հետեւալ միջոցը հնարեց. հէնց որ աղախինը մտնում էր սենեակը, կապիկը առնում էր երկար փալտը, մուրճը և միւս ծանր առարկաները ու նրանց ձեռքերում բռնած աշխատում էր բարձրանալ սենեակում դրած կախարանի (ВЪШИЖИКЪ) վերալ։

Հասնելով կախարանի գագաթին, նա իսկոյն աչնտեղից գցում էր փալտը, մուրճը և միւս առարկաները, որոնք ալս դէպքում կարող էին դիպչել աղախնի կրծքին, գլխին, եթէ նա շուտով չը փախչէր սենեակից։

¹⁾ Դարւին, նոյն տեղ, էջ 47.

IV

Ընդհանուր հալեացք: Ամեօբան, Պոլիպները, կակղամարմինները, միջատները, ողնաւորները, ձկները, թռչունները, կաթնասունները, Նզրակացութիւն՝ Մարդու և կենդանիների հոգեկան երևոյթները ունեն միևնույն հիմնական գծերը:

Այժմ աւելորդ չի լինիլ մի ընդհանուր հալեացք ձգել առաջ բերած բոլոր ֆակտերի վերայ:

Մենք տեսանք, որ կենդանական աշխարհի ամենացածր ներկայացուցիչները—ամեօբան, պոլիպները և միւսները—բոլորովին զուրկ են խելքից: Զգայնութիւնն ու խելքը սկսում են նկատելի դառնալ, այն էլ շատ թույլ կերպով, կակղամարմինների (մոլլուսկների) դասակարգում: Միջատները ունենալով աւելի բարձր կազմուածք քան կակղամարմինները, օժտւած են նաև աւելի մեծ խելքով քան վերջինները:

Սակայն ամենից աւելի զարգացած խելք ու զգայնութիւն ունեն ողնաւոր (այսինքն մէջքի ողնաշար ունեցող) կենդանիները, որոնք միևնույն ժամանակը համարւում են ամենաբարձրը, ամենակատարել բոլոր կենդանիներից:

Ողնաւորներից էլ այն դասակարգերը, որոնք ունեն աւելի ցածր կազմածք, աւելի քիչ են զարգացած խելքով, նրանց զգայնութիւնն էլ աւելի թույլ է զարգացած քան աւելի բարձր ողնաւորներից: Սրինակ ձկները, որոնք պատկանում են ամենաստոր ողնաւորների թւին, համեմատաբար շատ ստոր են իրանց ոգու զարգացմամբ:

Ձկներից մի աստիճան աւելի բարձր կանգնած սողունները, գորտերը, մողեսները (amphibien) զերազանցում են ձկներից իրանց խելքով:

Իսկ թռչունները ու կաթնասունները և վերջիններից մանաւանդ շները և կապիկները իրանց զգացմունքներով և խելքի զարգացումով արդէն չիշեցնում են մարդուն:

Խօսելով այդ հարցի մասին Ղարւինը հետեւեալ նկատողութիւններն է անում. «Զարհուրանքը բոլորովին միակերպ է ներգործում թէ մեզ և թէ կենդանիների վերայ. նրանց մկանունքները

դողում են, սիրտը բաբախում է, մազերը ցցում են... Ամենքը գիտեն թէ ինչպիսի հեշտութեամբ կենդանիները հասնում են կատաղութեան և ինչպէս պարզ կերպով արտայայտում են իրանց կատաղութիւնը... Իրանց ճշտութեամբ յայտնի Ռենգերը և Բրեմլը հաւատացնում են, որ իրանց կապիկները իսկապէս ընդունակ էին վրէժինդրութեան: Շան սէրը դէպի իր տէրը զարմանալի է: ¹⁾

Ընթերցողին յայտնի է, որ մայրական սէրը, սէրը դէպի ամուսինը, հաւատարմութիւնը ամուսնական կապի վերաբերմամբ, ատելութիւնը, հպարտութիւնը—այս բոլոր զգացմունքները զոյութիւնունին ոչ միայն մարդկանց ալ և կենդանիների հասարակութիւնների մէջ:

Բացի դրանից կենդանիները օժտած են նաև բարդ զգացմունքներով: Ամենքը նկատած կը լինեն շան խանդոտութիւնը, որը արտայայտուում է, երբ նրա տէրը սկսում է զգւել մի ուրիշին: Նոյնը նկատուում է և կապիկների շրջանում: Այդ ցոյց է տալի, որ կենդանիները ոչ միայն սիրում են, ալ և ցանկանում են սիրւած լինել... Նրանք սիրում են խրախուսանք և գովասանք... Մեծ շունը ուշադրութիւն չի դարձնում լակոտների հաչոցին և այդ յատկութիւնը կարելի է անւանել մեծահոգութիւն: Մի քանի գիտնականներ նկատել են, որ կապիկները բոլորովին չեն սիրում, որ նրանց վերայ ծիծաղեն և երբեմն իրանց վիրաւորւած են ձեւացնում: ²⁾

Մտաբերելէնք, որ կենդանիները ընդունակ են հիանալ գեղեցկութիւնով. մի քանի կենդանիների էզերը ընտրում են իրանց համար իբրև ամուսին աւելի գեղեցիկ որձերին, իսկ վերջինները գեղեցիկ սևռի սիրաը գրաւելու համար կոկետաբար ցոյց են տալիս իրանց շքեղ զարդերը: Եթէ որձի թւեան են գեղեցիկ, նա բաց է անում էզերի առաջ իրա թւերը հովհարի նման այնպէս, որ երևան դաջ նրա բոլոր գեղեցկութիւնը: Իսկ եթէ գեղեցիկ է որձի, օրինակ, կուրծքը և ոչ թւերը, նա երբէք չի բաց անում գեղեցիկ սևռի առաջ իրա թւերը, ալ վերում է շքեղ կուրծքը:

¹⁾ Չ. Դարւին—Մարդու ծագումը, էջ 37—38.

²⁾ Չ. Դարւինն նաև տեղ էջ 40.

Եթէ այս ֆակտորին աւելացնենք և այն, որ Թռչունները ընդունակ են զմայլել գեղեցիկ երգով—ընդունակ են գնահատել մոզլիկան, այն ժամանակ կը գանք այն եզրակացութեան, որ Թռչունները ունեն յայտնի էսթետիքական զարգացում: Գեղեցիկ մասին ունին գաղափար նաև շատ ուրիշ կենդանիներ, բայց ինչպէս երևում է նրանց ճաշակը աւելի քիչ է զարգացած քան Թռչուններինը:

Վերջապէս չը պէտք է մոռանալ և այն հետաքրքիր ֆակտը, որը ես բերեցի վերև կապիկների կեանքից և որը ցոյց է տալի, որ կենդանիների ընկերասիրութիւնը կարող է նրան հասցնել մինչև հերոսութեան...

Գալով կենդանիների խելքի զարգացման հարցին պէտք է նկատել, որ կենդանիները օգտուած են խելքի գլխաւոր տարրերով. նրանք ունեն բաւական մեծ յիշողութիւն, հետաքրքրութեամբ դիտում և զննում են ամեն մի նոր առարկայ: Կապիկները, օրինակ, մի նոր բան տեսնելով երկար սկսում են աշխատել, տանջել, որպէս զի իմանան հետաքրքրական առարկայի կազմածքը: Մի կապիկ տեսնելով թէ ինչպէս է տանտիկինը բաց անում սանդուղը բանալիքով, սաստիկ հետաքրքրւեց և երբ նրան տւին բանալիքը՝ նա բոլոր իր ուշադրութիւնը կենտրոնացրեց սանդուղը բաց անելու վերայ. հազար անաշող փորձեր անելուց յետոյ, վերջապէս նա գտաւ բանալիքի դորժածութեան գաղտնիքը:

Խօսելով Թռչունների մասին ես առիթ ունեցայ յայտնել, որ նրանց ուղեղը՝ մարդկանց ուղեղի նման, ընդունակ է կազմել նոյն իսկ ասոցիացիաներ: Այստեղ աէտք է աւելացնեմ, որ այդ երևոյթը ճիշտ է ոչ միայն Թռչունների, այլ և շատ ուրիշ կենդանիների վերաբերմամբ, օրինակ՝ շների, կապիկների, կատուների...

Շների և կապիկների կեանքից բերած ֆակտորը ցոյց տւին մեզ, որ այդ կենդանիները դնւելով արտաքին պայմանների շնորհիւ բաւական դժար դրութեան մէջ, ընդունակ են յաճախ ելք գտնել այդ դրութիւնից դուրս գալու համար շնորհիւ իրանց խելքին: Շատ անգամ կենդանիները գեղեցիկ կերպով փոփոխում են արտաքին պայմանները, յարմարեցնելով նրանց իրանց նպատակների համար: Իսկ հէնց այդ ընդունակութիւնն է, որ կոչւում է խելք:

Շատ անգամ կենդանիները այնպիսի խեղացի դործողութիւններ են անում, որ նրանցից աւելի դերազանց, աւելի խեղացին չէր կարող անել նոյն իսկ մարդը, եթէ նոյն դրութեան մէջ գտնւէր:

Այդպիսով ունենալով աչքի առաջ բոլոր վերեւ բերած ֆակտերը, անկարելի է կարծեմ չը գալ այն եզրակացութեանը, որ մարդու և կենդանիների հոգեկան երևոյթները ունեն մի և նոյն հիմնական գծերը: Բոլոր զանազանութիւնը մարդու և կենդանիների մէջ՝ մեզ հետաքրքող հարցի վերաբերմամբ, կայանում է նրանում, որ մարդու խելքը ու զգացմունքները աւելի զարգացած են, աւելի բարդ են:

Ունենալով ՚ի նկատի այն հանգամանքը, որ բարձր ողնաւորները աւելի զարգացած խելք ու զգացմունքներ ունին քան մրջկանները, մենք կարող ենք Զոն Լեօբբոկի այն խօսքերը, թէ մրջկանների մտաւոր ընդունակութիւնները զանազանում են մարդկային մտաւոր ընդունակութիւններից ոչ այնքան էութեամբ, ինչքան աստիճանովս փոփոխել այսպէս՝ Կենդանիների մտաւոր ընդունակութիւնները (և առհասարակ հոգեկան երևոյթները) զանազանւում են մարդկային մտաւոր ընդունակութիւններից ոչ այնքան էութեամբ, ինչքան աստիճանովս:

Իսկ եթէ այնուամենայնիւ մեզ թւում է, թէ իբր մեծ տարբերութիւն կայ կենդանիների և մարդկանց հոգեկան երևոյթների մէջ, այդ առաջանում է նրանից, որ մենք համեմատում ենք կենդանիներին այն մարդկանց հետ, որոնք աստիճիկ զարգացել են կուլտուրայի ազդեցութեան տակ:

Բոլորովին տարբեր եզրակացութեան կը գանք, եթէ համեմատութեան համար վերցնենք ոչ թէ կուլտուրական ցեղերը, այլ վայրենի մարդկանցը, որոնց մտաւոր զարգացումը ողորմելի է, ճաշակը անտանելի և զգացմունքները բանասնական:

Եթէ, ասում եմ, այդ վայրենի մարդկանց հոգեկան երևոյթները համեմատենք կենդանիների հոգեկան երևոյթների հետ, այն ժամանակ մենք կը համոզուենք, որ իրօք այնքան էլ մեծ չէ այն զանազանութիւնը, որը կայ մարդկանց և կենդանիների խելքի և զգացմունքների մէջ:

Այս եղբայրացութիւններն, որոնց ապացուցանելու պատիւը անկասկած պատկանում է Չարլզ Դարւինին, ունեցան մեծ հետեւանքներ: Բերեմ դոցանից մէկը:

Առաջ մարդու հոգեկան երևոյթները ուսումնասիրում էին բոլորովին առանձին և այդ ուսումնասիրութիւնը չաճախ հանդիպում էր ահագին դժւարութիւնների, որովհետև այդ երևոյթները շատ բարդ են:

Մեզ համար այժմ պարզ է, որ նոյն իսկ մարդու հոգեկան երևոյթների ուսումնասիրութեան համար, մենք պէտք է առաջ ծանօթանանք և ուսումնասիրենք կենդանիների հոգեկան երևոյթները, որովհետև միևնոյն երևոյթները կենդանիների շրջանում առաջ են գալիս աւելի հասարակ ձևով, ուստի և աւելի հեշտ է նրանց ուսումնասիրելը:

Այդպիսով մարդու հոգեբանութիւնը չը պէտք է առանձին գոյութիւն ունենայ, այլ պէտք է լինի կապած կենդանիների հոգեբանութեան հետ. մարդու հոգեբանութիւնը պէտք է յենւի կենդանիների հոգեբանութեան վերայ: